

ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այս կանոնը կը գրեմք անոնց համար, որոնք անաստուածաբար սուտ վկայութիւն կու տան: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքին մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր»: (Ելք Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սուկալի իրողութիւնը այն է, որ նշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է, իսկ սուտ վկան անբիշ ու կործանիչ է նշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ՝ ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէ»-ն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը, որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները, եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սղ. Ե. 7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը նշմարտութեան վարժեցուցէ՛ք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ

ԾԱՂԻԿ



Բնութեան գեղեցիկ արգասիքներէն մին է ծաղիկը, սիրելի մարդկային բոլոր դասակարգերուն կողմէ: Ան ամէնուրեք գարդ է եւ առիւնեղոյ ներկայութիւն, որպէս սիրոյ արտայայտութիւն, սուգի միտքարութիւն, յարգանքի եւ մեծարանքի հանդիսութեանց, որպէս խօսուն արտայայտութիւն:

Ժողովուրդին կողմէ սիրելի եւ գնահատելի բնութեան չքնաղ այս նուէրը, բնական էր, որ իր տեղը ունենար նաեւ աստուածընկալ Ս. Սեղանին վրայ: Բնական էր, որ բարեպաշտական զգացումներով հաւատացեալներ խունկին եւ մոմին հետ նաեւ ծաղիկ ընծայէին Ս. Սեղանին:

ՊԱՆԵՑ ՈՂՈՒԹԻՒՆ

Ճշմարիտ պահեցողը ան է, որ ինքզինք հեռու կը պահէ ամէն տեսակի անմաքրութենէ, եւ դէմ կը դնէ իր լեզուին եւ անկէ բխող զրպարտողական ու դատապարտողական ամէն տեսակի խօսքերու:

(Եփրեմ Խուրի Ասորի)



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ՄԱՐՏ 2022

ԹԻՒ 11

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 54.11-55.13: Բ. Կր. 6.1-7.1 Ղկ.15.1-32

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15.1-32

Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հայր, քու ստացուածքէն ինձի ինկող բաժինը հիմա տուր ինձի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն. - Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ՛ քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գնաց վազելով դիմաւորեց զայն, վզին փաթառեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ, այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս քերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն, մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթք, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երեց զաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց, թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթք մորթեց»: Երեց զաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց, որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ, որեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթք մորթեցիք անոր համար»:

Հայրը ըսաւ. «Տղաս, դուն միշտ ինձի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԿԻՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ

Վարդապետ եկեղեցւոյ. ծնաւ 315-ին Երուսաղէմի մօտերը, քահանայ ձեռնադրուեցաւ 345-ին, պատրիարք ընտրուեցաւ 350-ին: Իր առաքինակրօն կեանքին եւ իմաստութեան համար սիրելի դարձած էր ուղղափառներուն եւ նոյնիսկ չարափառներուն, այսինքն՝ արիոսեանց: Բայց պատրիարքական աթոռ ելլելէ առաջ, երբ ըմբերանեց այս վերջինները, անոնք հակառակութեամբ լեցուեցան իր դէմ: Այն հակառակութեան հետեւանքովն էր, որ անգամ մը գահընկեց եղաւ, եւ յետոյ նորէն դարձաւ Երուսաղէմ, Յուլիանոս Ուրացոյի ատեն, որուն հրէից Տանարը վերաշինելու անմիտ ձեռնարկին ակնատես իսկ եղաւ: Արիոսականները յաջողեցան վերստին ձգել զինքը իր Աթոռէն, որուն վրայ վերջապէս վերահաստատեց յետոյ զինքը Կ. Պոլսոյ ժողովը: Իր օրով տեղի ունեցաւ Ս. Խաչին հրաշալի երեւումը Երուսաղէմի մէջ, որուն համար ծանուցանող նամակ մը ուղղեց Կոստանդկայսեր: Իր հոգեւոր գործունէութեան ամենէն փայլուն եւ արդիւնաւոր կողմերէն մին եղաւ ի քրիստոնէութիւն դարձր բազմեւաբան հեթանոսներու, որոնք իր ձեռքէն կ'ընդունէին քրիստոնէութիւնը:

Այս առթիւ խօսած իր քարոզները, որոնք քրիստոնէական վարդապետութեան սեփական սկզբունքները կը պարունակեն, մեծ մասամբ ամփոփուած են «Կոչումն ընծայութեան» հատորին մէջ, որ ոսկեդարեան թարգմանութեամբ վերածուած է հայերէնի: Թարգմանուած է նոյնպէս Կոստանդկայսեր ուղղած իր նամակը:

Իսկ աւանդութիւնը Երուսաղէմի Ս. Յակոբեանց եկեղեցիի Ս. Ստեփանոս մատրան մէջ կը ցուցնէ աւագանը, որուն մէջ Ս. Կիրեոյ մկրտած էր երախայից բազմութիւն մը:

Հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս տարի տօնը կը գուգադիպի Շաբաթ, 12 Մարտ 2022-ին:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՄԵԾ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆԻՆ ՎԱՐԱԳՈՅՐ ԳՈՑԵԼ ԻՆՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ

Մեծ պահոց ընթացքին 45 օր վարագոյրը գոց կը մնայ ի նշան նախաձեռնողներու մեղանշումին եւ զոջումի ու ապաշխարութեան շրջան մը կը սկսի հաւատացեալներու հոգեւոր պատրաստութեան, դիմաւորելու համար Աստուածորդոյն հրաշափառ Ս. Յարութիւնը:

Այստեղ կ'ուզենք յիշատակել, որ Մեծ Պահոց ընթացքին սեւ կամ մութ գոյն վարագոյր կը գործածուի:

Անցեալին կարգ մը եկեղեցիներ որդեգրած էին երկրորդ վարագոյրի մը դրութիւն, որ ատելի փոքր կ'ըլլայ, եւ այդ վարագոյրը կը գոցուէր, երբ պատարագիչ քահանան կը ճաշակէր Ս. Հաղորդութիւնը եւ կ'ըմպէր Քրիստոսի Արեան փոխարկեալ զինին:

Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ մօտ վարագոյրի փոխարէն Ս. Սեղանը մասնաւոր սրբանկարներով ծածկուած կ'ըլլայ ժողովուրդի տեսողութենէն, կեղորոնը ունենալով մասնաւոր բացուածք մը, ուրկէ պատարագիչը խաղաղութիւն կու տայ:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԽՍՏԻՆՔ ՏԻՐՈՋ ՄԵՐ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Տղաք, ուտելիք բան մը ունի՞ք: Բնականօրէն Յիսուս ինքնիր անձին համար չէր, որ ուտելիք կը խնդրէր, որովհետեւ արդէն յարութիւն առած էր եւ չէր կրնար նիւթական ուտելիքի կարիքը ունենալ: Ան կ'ուզէր գիտնալ, եթէ երբեք իր սիրասուն աշակերտները, որոնք իր զուակներն էին՝ բան մը ունէին ուտելու թէ ոչ: Անշուշտ Տէրը գիտէր, որ բան մը չունէին, բայց կ'ուզէր ասիկա իրենց բերնէն լսել:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Հոսկէ կը սորվինք երկու բան, առաջին, որ Յիսուս կարեկցութիւն կը ցուցաբերէ աղքատին ու անօթիին նկատմամբ, եւ երկրորդ, որ աղքատ դասակարգի մարդիկ պէտք է հաւատքով իրենց դատը ներկայացնեն Յիսուսի ճիշդ, ինչպէս աշակերտները իրենց դատը ներկայացնելով ըսին, թէ ուտելու բան մը չունին: Միւրեքներ, մեր Փրկիչը հոգատար Աստուած է: Եթէ մենք իր զուակներն ենք, պէտք է իրեն պէս հոգատար եւ կարեկից ըլլանք աղքատին, անօթիին ու տառապեալին հանդէպ:

ԱՌԱԿ 4

Որդեակ, լսէ՛ խօսքերս եւ գործադրէ՛ զանոնք, այն ատեն պիտի երկարին ու առատանան կեանքիդ տարիները: Ես՝ իմաստութեան սկզբունքները կը սորվեցնեմ քեզի, կը ծանօթացնեմ ուղիդ ճամբաները, որ պէսզի քալած ատենդ խոչընդոտի չհանդիպիս եւ վազած ատենդ յոգնութիւն չզգաս:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ՔՈՒ

ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՄԲԻ ԿՐՈՐՈՒՄԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ՆԵՐՔՈՂԵԼ, Կարդա՛ր.՝ ՍԱՂՄՈՍ 57

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, ողորմէ՛ ինձի, որովհետեւ քեզի՛ ապաւինեցայ: Քու թելերուդ հովանիին տակ պիտի ապաստանիմ, մինչեւ անցնի պատուհասը: Բարձրեալ Աստուծոյ կ'աղաչեմ: Աստուծոյ, որ իր օգնութիւնը կը դրկէ ինձի: Երկինքէն օգնութիւն կը դրկէ եւ կը փրկէ զիս, եւ կը նախատէ անոնք՝ որոնք կեանքիս կը սպառնան: Աստուծոյ սէրը եւ իր հաւատարմութիւնը կը ցուցնէ ինձի: Ես գազաններու մէջ մնացեր եմ, մարդոց մէջ՝ որոնք կրակ կը ժայթքեն, նիզակի եւ նետերու պէս ցցած են իրենց ակռաները, եւ սրածայր սուրերու պէս՝ իրենց լեզուները: Երկինքներէն գերիվեր ես դուն, ո՛վ Աստուած, թող քու փառքդ ամբողջ երկրի վրայ հաստատուի: Չիս որսալու համար ոտքերուս առջեւ ցանցեր փռեցիմ, իմ դիմացս գուրբեր փորեցիմ, բայց իրենք ինկան անոր մէջ: Միտս պատրաստ է ո՛վ Աստուած, սիրտս պատրաստ է՝ քե՛զ երգելու եւ նուագով ներբողելու: Արթնցի՛ր, ո՛վ իմ անձս ելէ՛ք, տալիդ ու քնար, ես արթուն պիտի դիմաւորեմ առաւօտը: Ազգերու մէջ պիտի գովերգեմ քեզ, Տէ՛ր, ժողովուրդներուն մէջ պիտի ներբողեմ քեզ, որովհետեւ այնչափ սէրդ մինչեւ երկինք կը հասնի, հաւատարմութիւնդ մինչեւ ամպեր: Երկինքէն գերիվեր ես դուն, ո՛վ Աստուած, թող քու փառքդ ամբողջ երկրի վրայ հաստատուի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ